ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 16

ԵՊՀ Իջևանի մասնաճուղի բնական գիտությունների ֆակուլտետի խորհրդի նիստի 03-ը ապրիլի 2014թ.

Նախագահ՝ Ա. Վ. Ցուցուլյան

Քարտուղար՝ Հ. Ս. Գասպարյան

Ներկա էին խորհրդի 8 անդամներ:

ՕՐԱԿԱՐԳ

1. *2013-14թթ. ուստարվա II կիսամյակի I և II /ավարտական կուրսերի/ ընթացիկ ստուգումների և քննությունների արդյունքների ամփոփում:*
   /զեկ. Ա. Վ. Ցուցուլյան/
2. *2013-14թթ.ուստարվա II կիսամյակի II ընթացիկ ստուգումների և ընթացիկ քննությունների գրաֆիկի հաստատում:*
   /զեկ. Ա. Վ. Ցուցուլյան/
3. *Գնահատման նոր համակարգի քննարկում: Կրթական արդյունքերի չափորոշիչներով բակալավրի հիմնական ծրագրերի հիմք՝ որակավորումների ազգային շրջանակը:*
   /զեկ. Ա. Վ. Ցուցուլյան/

ԼՍԵՑԻՆ.- Ա. Վ. Ցուցուլյանի զեկուցումը 2013-14թթ. ուստարվա ավարտական և I, II կուրսերի II կիսամյակի II և I ընթացիկ ստուգումների և քննությունների արդյունքները համապատասխանաբար:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Գ. Վ. Գուլակյանը, Է. Կ. Օսիպովան: Նրանք համակարծիք էին ներկայացված նյութին և առաջարկեցին, որ անհրաժեշտ է ուսանողների հանդեպ խստացնել պահանջը ըստ ուսումնական կարգի ավարտական կուրսերի քննաշրջանին և I և II կուրսերի II ընթացիկ ստուգումներին և քննություններին համեմատաբար ապահովելու բարձր արդյունք:

Զեկուցողը միաժամանակ ընդհանուր հանձնարարական տվեց դեկանատին և ամբիոններին լուրջ ուշադրություն դարձնել ավարտական կուրսերի քննաշրջանին և լինել հետևողական քննաշրջանը կազմակերպված անցկացնելու համար:

Օրակարգի երկրորդ հարցի մասին Ա. Վ. Ցուցուլյանը ներկայացրեց 2013-14թթ. ուս. տարվա II կիսամյակի II ընթացիկ ստուգումների և քննությունների ժամանակացույցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Մ. Ա. Զաքարյանը: Նա համակարծիք էր ներկայացված գրաֆիկին հաստատելով, որ այն կազմվել է համաձայն ուսումնական պլանի և առաջարկեց հաստատել:

ՈՐՈՇԵՑԻՆ- 1. Ներկայացնել տնօրենություն հաստատելու 2013-14թթ. ուստարվա II կիսամյակի II ընթացիկ ստուգումների և քննությունների ժամանակացույցը:

2.Քննաշրջանը կազմակերպել ըստ հաստատված ժամանակացույցի:

Օրակարգի երրորդ հարցի մասին ֆակուլտետի խորհրդի նախագահ Ա. Վ. Ցուցուլյանը ներկայացրեց գնահատման նոր համակարգի մասին: Կրթական արդյունքերի չափորոշիչներով բակալավրի հիմնական ծրագրերի մասին՝ հիմք ընդունելով որակավորումների ազգային շրջանակը, այն որակավորումների բազմամակարդակ մի համակարգ է, որը պետք է օգտագործվի շնորհվող որակավորումները նկարագրելու համար. տեղեկատվություն տալով կրթական համակարգի յուրաքանչյուր շրջափուլի, ինչպես նաև ամեն մի շրջափուլին համապատասխանող որակավորումների և շնորհվող աստիճանների մասին: Այն հնարավորություն է տալիս ուսանողներին, համեմատելով տարբեր մակարդակներին համապատասխանող որակավորումները, գնահատել իրենց ապագա առաջընթացի հնարավոր հեռանկարները և որոշել, թե ինչպիսի՞ որակավորումներ են իրենք ցանկանում ձեռք բերել:

Որակավորումների ազգային շրջանակի նպատակն է դյուրացնել մուտքը դեպի կրթական և վերապատրաստման կառույցներ, ապահովել դրանց փոխկապակցվածությունը, ինչպես նաև նպաստել սովորողների շարժին և առաջխա ղացմանը թե՛ կրթական, թե՛ վերապատրաստման գործընթացներում:

Որակավորումների շրջանակը հնարավորություն է ընձեռում նաև ճանաչել արտերկրում ստացած որակավորումները:

Այնուհետև ֆակուլտետի խորհրդի նախագահը հանձնարարեց, որ եթե ընթացիկ ստուգումների և քննությունների անցկացման և գնահատման կարգում կան փոփոխությունների առաջարկություններ, որոնք էլ ավելի կբարձրացնեն ընթացիկ ստուգումների և քննությունների արդյունավետությունն ու գնահատման օբյեկտիվությունը՝ ներկայացնել մինչև 10.04.2014թ. :

ՆԱԽԱԳԱՀ **Ա. Վ. ՑՈՒՑՈՒԼՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐ **Հ. Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ**